

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

10.04.2017թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ. Դոխոյանը, Ս. Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյան - մարզպետի խորհրդական
- Տ.Էվինյան - մարզպետի օգնական

#### Օրակարգում՝

1. Համայնքների 5-ամյա զարգացման ծրագրերի վերանայման և հանրային խումբերի կազմակերպման մասին  
/Ա. Նալբանդյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների և կատարված աշխատանքների մասին  
/Ջեկ. Ն. Սարգսյան/
3. «Սմարթ» դասարանների կազմակերպման գործընթացի մասին  
/ Ջեկ. Լ. Ասլանյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին  
/ Ջեկ. Հ.Պապոյան/
5. Միջհամայնքային ճանապարհների փաստացի վիճակի և վերականգնման առաջնահերթությունների ժամկետների, չգազաֆիկացված համայնքների մասին  
/ Ջեկ. Ա.Ջանազյան/
6. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին  
/ Ջեկ. Գ. Հակոբյան/
7. «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում իրականացված աշխատանքների մասին  
/ Ջեկ. Ա.Օհանյան/
8. Ամառային գորակոչի ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին  
/ Ջեկ. Ս.Ղուբաթյան/
- 9.Այլ հարցեր:

## Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Լոռու մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշներն ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Ներկայացնել ամփոփ տեղեկատվություն միջհամայնքային ճանապարհների փաստացի վիճակի և գազաֆիկացման խնդիր ունեցող համայնքների վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Ներկայացնել առաջարկություններ համայնքների 5-ամյա զարգացման ծրագրերի վերանայման և հանրային լսումների կազմակերպման մասին:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին կազմակերպել շաբաթօրյակներ համայնքների աղբավայրերի վերացման և մաքրման աշխատանքների կազմակերպման նպատակով:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին և ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Մ. Սայադյանին

5-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ մարզի նոր՝ 2-րդ փուլի «Սմարթ» դպրոցների կազմակերպման և շահագործման աշխատանքների վերաբերյալ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ